ԿԱՐԾԻՔ

ՎԵՐԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ «ԹԵՇՔԻԼԱԹԸ ՄԱԽՍՈՒՍԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերա Սահակյանի՝ «Թեշքիլաթը մախսուսա կազմակերպությունը Օսմանյան կայսրությունում» ատենախոսության թեման արդիական է՝ նկատի առնելով Թուրքիայի հատուկ ծառայությունների պատմության ուսումնասիրման գործում ակադեմիական հետաքրքրությունները՝ հատկապես թուրք հետազոտողների կողմից: 1990-ական թվականներից Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության հատուկ ծառայությունների պատմության ուսումնասիրությունները հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվեցին, իսկ հաջորդ տասնամյակներում ուսումնասիրություններն ավելի ակտիվացան: Բնականաբար, թուրք հետազոտողների նպատակը թուրքական պատմագրության մոտեցումներին և գործելաոճին հարիր ուսումնասիրությունների կատարումն էր, ինչը կշրջանցեր պատմության առանցքային որոշ հարցեր ու հիմնախնդիրներ: Տվյալ պարագայում Հայոց ցեղասպանության իրականացման գործում երիտթուրքական հատուկ ծառայությունների դերի ու գործունեության ստվերումն էր, որն առաջնահերթ էր թուրքական պատմագրության համար: Մյուս կողմից վերջին երկու տասնամյակների ընթացքում թուրքական ռազմական ու անվտանգության ոլորտի վերաբերյալ պատմագիտական բնույթի ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրությունները պայմանավորված են Թուրքիայի՝ տարածաշրջանային ռազմական ու քաղաքական տերության վերածելու էրդողանական տեսլականի ձգտումներով, ինչը կարևոր է դարձնում օսմանյան պատմական անցյալի վերարժևորումն ու վերագնահատումը ժամանակակից Թուրքիայի վերափոխումների ու հանրային ընկալումների ձևավորման համատեքստում:

Ատենախոսն իրավացիորեն նկատում է, որ թուրքական պատմագրությունը շարունակում է ժխտողական տեսակետները պաշտպանող ուսումնասիրությունների հրատարակումը՝ շրջանցելով ու անտեսելով Հայոց ցեղասպանության իրականացման գործում, օրինակ, հատուկ ծառայությունների ունեցած դերը: Ուստի, սույն

ատենախոսությունը կարևոր նշանակություն ունի Հայոց ցեղասպանության իրականացման գործում «թեշքիլաթը մախսուսա» կազմակերպության դերը քննելու և վերհանելու տեսանկյունից:

Ներածության մեջ ձևակերպված և հիմնավորված են թեմայի արդիականությունն ու նորույթը, ուսումնասիրության հետազոտական խնդիրները, աշխատանքի մեթոդները, հիմնական օգտագործված գրականության տեսությունը և այլն: Աշխատանքը գրված է աղբյուրագիտական ու մասնագիտական գրականության լայն բազայի հիման վրա: Ատենախոսն օգտագործել է ինչպես թեմային առնչվող տարատեսակ սկզբնաղբյուրներ, այնպես էլ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն ակադեմիական հարուստ գրականություն: Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական եզրահանգումները, որոնք հիմնականում համապատասխանում են առաջադրված հետազոտական խնդիրներին:

Երեք գլուխներից բաղկացած ատենախոսության առաջին գլուխն անդրադառնում է «թեշքիլաթը մախսուսա» կազմակերպության ձևավորման նախապատմությանը Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ու գաղափարական գործընթացների շրջանակում: Երկրորդ գլխի շրջանակում ներկայացվում և վերհանվում են այդ կառույցի ստեղծման հիմնական դրդապատճառները և հատկապես դրա՝ Հայոց ցեղասպանության իրականացման և համակարգման գործում դերակատարություն ունեցած տարածքային շտաբների ձևավորման պատմական ու քաղաքական պատճառները: Թեմայի քննության տեսանկյունից կարևոր են հատկապես կառույցի՝ Վանի, Էրզրումի, Տրապիզոնի շտաբներին վերաբերող ենթաբաժինները և ատենախոսության երրորդ գլուխը, որում վեր են հանվում ազգային միատարր պետության ստեղծման երիտթուրքական ծրագրերում կառույցի դերին, դրա կազմակերպչակառուցվածքային առանձնահատկություններին, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության իրականացման գործում դրա մասնակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ դիտողություններ ու դիտարկումներ, որոնք կօգնեն ատենախոսին հետագա հետազոտություններում ու սույն աշխատանքի լրամշակումներում:

Աշխատանքի կիրառականության նշանակության ձևակերպումը որոշակիորեն գերագնահատված է: Ցանկալի կլիներ, որ ուսումնասիրության մեթոդների ընտրությունը ավելի ֆոկուսային ներկայացված լիներ: Առաջադրված նպատակը, հետազոտական որոշ խնդիրներ հստակեցման, վերաձևակերպման և թեմայից բխող ֆոկուսայնության խնդիրներ ունեն (կետ 1, 11): Ատենախոսության առաջին գլուխը ընդհանրական է և ցանկալի կլիներ ավելի հասցեական անդրադարձ կատարվեր թեմայի խնդրից բխող հիմնահարցերի քննությանը:

Առկա են որոշ փաստական սխալներ (օրինակ՝ էջ 49, հղում 200 («Հրատարակվել է հետմահու»), էջ 40-ում նշված է, որ «Պանօսմանիզմը *(համաօսմանականություն)* կամ օսմանիզմը Օսմանյան կայսրությունում պաշտոնապես ընդունված գաղափարախոսություն էր, մինչդեռ այն ոչ թե պաշտոնապես ընդունված, այլ՝ դոմինանտ գաղափարախոսական հոսանք էր: Տարբեր էջերում (օր.՝ էջ 48, 140, 148, 152) առկա են օտարալեզու մեջբերումներ, որոնք պետք է լինեին հայերեն: Բացի այդ, թուրքալեզու աշխատանքների վերնագրերը շատ դեպքերում ներկայացված չեն հայերեն (օր.՝ էջ 48, 72): էջ 52-ում օգտագործված է «ազերի թուրքեր» ձևակերպումը, ինչի փոխարեն առավել ճիշտ կլիներ «կովկասյան թաթարներ կամ այսրկովկասյան թյուրքեր» ձևակերպումը, էջ 95-ում «Արևելյան Իրան»-ի փոխարեն պետք է լինի «Արևմտյան Իրան»: էջ 161-ում “Misak-ı Milli” (Ազգային ուխտ)-ը ներկայացված է որպես կազմակերպություն և էությունը բացատրված չէ, էջ 143-ում տարընթերցման տեղիք տվող շարադրանք է առկա, էջ 163-ում սխալ է ներկայացված խալիֆայության ինստիտուտի լուծարման տարեթիվը: Աշխատանքում առկա են որոշ վիճարկելի պնդումներ, որոնք լրացուցիչ հստակեցման, պարզաբանման կարիք ունեն՝ օրինակ, էջ 51-ում քեմալիզմի և պանթյուրքիզմի առնչությամբ, էջ 164-ում՝ «թեշքիլաթը մախսուսա» կազմակերպության ձեռք բերած փորձառությամբ պայմանավորված մինչև 1960-ական թթ. Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության կայուն ու աներեր հիմքի վերաբերյալ պնդումները:

Վերոնշյալ դիտողությունները չեն նվազեցնում կատարված հետազոտական աշխատանքի արժանիքները, չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի վրա: Վ. Սահակյանի՝ «Թեշքիլաթը մախսուսա կազմակերպությունը Օսմանյան կայսրությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին, ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ուստի, ատենախոսության հեղինակը կարող է հավակնել Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ստորագրությունը հաստատում եմ
Հայաստանի Ազգային Ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի
գիտքարտուղար

Scanned with MOBILE SCANNER